

ՆՓՐԵՄ ՍԵՐԸ ԱՐԵՎՄՏԱՆԱՑՈՒԹՅԱՆ 1829—1830 ԹԹ. ԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ

XIX դարի առաջին քառորդի վերջի ռուս-թուրքական պատերազմին հաջորդած արևմտահայության մի մեծաթիվ հատվածի գաղթի վերաբերյալ գոյություն ունի հարուստ գրականություն, Դրանցից հայագիտության մեջ իր կարևորությամբ արժեքավորվել է 1891 թ. Թիֆլիսում Գյուտ քահանա Աղանյանցի կողմից, սկզբում «Արձագանք» հանդեսում, ապա առանձին գրքուկով հրատարակված «Կարնո գաղթը (1829—1830)» աշխատությունը, Հեղինակը, չմիարկելով իր աղբյուրները, նշում է միայն, որ աշխատանքը շարագրել է քաղելով իր մոտ թղթված հիշատակարաններից և պատմական անցքերից»¹:

1904 թ. Սահակ վարդապետ Էժմեմյանի օգնությամբ Վենետիկի Մխիթարյան Միաբանության Դիվանում ծանոթացանք գաղթի տարիներին հովվական առաքելությամբ գաղթականներին ուղեկցող մխիթարյան վարդապետների և նրանցից հատկապես Հայր Եփրեմ վարդապետ Սեթյանի, կամ Աեթի նամակներին՝ հասցեագրված Միաբանության արքայապետ Սուքիաս Սոմալյանին²:

Եփրեմ Սեթյանը ծնվել էր Կ. Պոլսում 1791 թ. սեպտեմբերի 21-ին, քահանայական նշանադրությունը ստացել էր 1814 թ. Սուրբ Ղազարում: 1829 թ. հայ կաթողիկոսներին հովվելու նպատակով Վենետիկից անցնում է Ղրիմ, ուր հանդիպում է տեղում գտնվող մխիթարյան մեկ այլ վարդապետի՝ Մինաս Բժշկյանին³, ապա՝ Օդեսա, այստեղից էլ նավով Բաթումի: Ապա Արխագիտ—Փոթիս—Գորի—Թիֆլիս—Գուգարք—Շիրակ—Բասեն ճանապարհով հասնում է էրզրում: Այնուհետև ռուսական զորքերի ուղեկցությամբ դեպի Անդրկովկաս գաղթող հայ բնակչության հետ միասին վերադառնում է Անդրկովկաս, ուր և մնում է մինչև իր կյանքի վերջը, իր ճանապարհորդությունը Եփրեմ Սեթը մանրամասնորեն նկարագրել է իր «Ուղեգրութեան» մեջ, որն առայսօր անտիպ է և պահվում է Վենետիկի Մխիթարյանների Ձեռագրատանը⁴:

Ախալցխայում Եփրեմ Սեթը ծավալել էր բավական լայն հովվական և գիտամշակութային գործունեություն: Վախճանվել է 1838 թ. մայիսի 3-ին և թաղվել Ախալցխայում:

1 Տե՛ս Գյուտ ք. Աղանյանց. Կարնո գաղթը (1829—1830), Թիֆլիզ, 1891, էջ 3:

2 Սուքիաս Սոմալյան—Վենետիկի Մխիթարյան Միաբանության շորորոգ արքա: Ծնվել է 1776 թ. հունվարի 24-ին Կ. Պոլսում: Քահանայացել է 1804 թ. դեկտեմբերի 9-ին: Աքրա է ընտրվել 1824 թ. հունիսի 4-ին: Արքեպիսկոպոս՝ 1826 թ. մայիսի 21-ից, Վախճանվել է 1848 թ. փետրվարի 10-ին Ս. Ղազար կղզում:

3 Եփրեմ Սեթի ժամանման և մեկնման մասին բարեխղճորեն արված գրառումները գտանք Սինաս Բժշկյանի 1796—1851 թթ. ընդգրկող անտիպ «Օրագրութիւն»-ում (տե՛ս Դիւան Ս. Ղազարի, տուփ, 161), 1829 թ. հունիսի 22-ին Մինաս Բժշկյանը արձանագրել է «Եկն առ իս հայր» Եփրեմ Սեթեան: Իսկ վերջինիս մեկնման մասին 1829 թ. նոյեմբերի 23-ին՝ «Զոքաւ հայր» Եփրեմ ընդ հայր Սոմալյան յԱխալցխա:

4 Սուրբ Ղազարի Ձեռագրատուն, ձեռագիր № 2761: Մենք գտանք այս «Ուղեգրութեան» ևս մեկ օրինակ Միաբանության Դիվանում (տուփ 124, փաստաթուղթ 11, «Ուղեւորութիւն Հայր Եփրեմ Սեթեանի ի Հայս 1829», 61 թերթ, որոշ էջերի արանքում նամակներից դատ՝ դատարկ ամրացված թերթեր): Համեմատությունից պարզվեց, որ ձեռագրատան օրինակը ավելի կատարյալ և ընտիր օրինակ է:

5 Այնտեղ նրա կողմից ընդօրինակվեցին մի շարք ձեռագրեր: Նա քիչ գործ չարեց նաև հայերեն արժեքավոր ձեռագրեր հավաքելու և Վենետիկ հասցնելու ուղղությամբ, իր «Ուղեգրութեան» մեջ (էջ 19) Սեթը գրում է. «...գտուն Իշխանատուն Արղութեանց, որոյ սեպուհն Նիկողայոս քաջահամբաւ, իմաստասէր և ևզգասէր: Են նորա և ընտիր գրչագիր մատենաք, յորս է Աստուածաշունչ գիրք, ձեռագիր Յոհաննու երդնկացու: Զլաւագոյնս ի մատենից անտի,

Եփրեմ Սեթի մահվանից հետո Սուրբ Ղազարում նրա աշխատանքներից ու թարգմանություններից հրատարակվեցին՝ ա) Իրաւագիտութիւն (1851, 659 էջ), բ) Սուրբ Օգոստինոս. Առանձնախօսութիւնք եւ առձեռնականք. թարգմ. Սեթեան հ. Ե., (1858, 250 էջ), գ) Պատմութիւն Զորից ինքնակալութեանց (1848, 352 էջ)։

Գաղթի կազմակերպման գործում ուսական իշխանություններին մեծ շահով աջակցություն ցուցաբերած և անձամբ հայ կաթողիկոսականության գաղթը կազմակերպած այս մխիթարյան վարդապետի Ս. Ղազար ուղարկված առայժմ անտիպ նամակները հանդիսանում են առաջնակարգ աղբյուր հայ բնակչության մինչ այդ շտեմնված շափերի հասնող տեղաշարժի ուսումնասիրման գործում։ Եփրեմ վարդապետ Սեթը, որ կազմակերպեց և անմիջականորեն ղեկավարեց էրզրումի և շրջակա բնակավայրերի հայ կաթողիկոսների գաղթը և նրանց տեղաբաշխումը Ջավախքում, իր նամակներում հաղորդում է ամենայն մանրամասներ գաղթի կազմակերպման մասին և դրանով իսկ հանդիսանում է առաջնակարգ աղբյուր հայ բնակչության այս մեծագույն տեղաշարժի մասին։ Եփրեմ Սեթի և մյուս վարդապետների նամակը նկատի ունեն զենեղալ Ն. Պ. Պանկրատևը, երբ 1829 թ. գեկտեմբերի 1-ին զեկուցում էր Ի. Ֆ. Պասկևիչին. «Էրզրում քաղաքի կաթողիկոսների վարդապետները, ավազների հետ միասին ինձ խնդրագիր մատուցեցին ուսական սահմաններ տեղափոխվելու վերաբերյալ»։ Ն. Պ. Պանկրատևը Պասկևիչից հրաման է խնդրում վերջիններիս գաղթը կազմակերպելու համար և հաղորդում է հետևյալ վիճակագրական տեղեկությունները կաթողիկոսների թվաքանակի վերաբերյալ՝

էրզրում քաղաք

240 ընտանիք

Օվայ

Արծաթի	74
Հինձք	20
Գամփո	10
Կարա-Քեոփեկ	8
Թուֆանդո	5

Թեքլան

Նորշեն	40
Ռոբաթ	15
Մեղուս	4

ըստ գովելի ջանիցն, յօգուտ ազգային՝ շնորհեաց ի պարգև Միաբանութեանս մերոյ, յամին 1829, յորում էր մատենան ճառից Սրբոյն Բարսղի, դրեալ ի թուիս մերում ԶԹ [89]»։

Եվ իսկապես, նվեր ստացված հետևյալ ձևագրերը այժմ պահվում են Ս. Ղազարի Զեռագրատանը՝

ա) 'ձեռագիր № 215—Յովհան Ոսկերեբան [1268—1286 թթ.], ձեռագրի առաջին տերը եղել է Հակոբ Ա կաթողիկոսը, վերջինը՝ Հովսեփ Արղուժյանը։

բ) ձեռագիր № 452—Եփրեմ Ասորի [1195 թ.] և այլն։

Այս ձեռագրերի վերաբերյալ հայտնի Ավդերյան ցուցակում կարդում ենք «Յիշատակ ի գրատուն Մխիթարեանց ի Վենետիկ, իշխանազուն Քնէադ Նիկողայոսի Երկայնարագուկ Արղուժեանց, 13 Յունիսի 1829, Տփլիս», «Առաքեաց առ մեզ զմատենանս Վերապատուելի [Հայր] Եփրեմ Վ[ա]րդ[ապետ]ն մեր Սեթեանց, ի ճանապարհորդութեան իւրում յաշխարհ Հայաստանահայց, որ եւ եհաս առ մեզ ի Վենետիկ յամի Տեառն 1831, ի 16 Դեկտեմբերիս, Սրանց եւ Սեթի կողմից արտագրված այլ ձեռագրերի մասին տե՛ս Ս. վ. Զեմճեմեան. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ հ. Ը, Վենետիկ, էջ 4, 182, 262, 318—319 եւ այլն (անտիպ)։

⁶ Присоединение Восточной Армении к России. Сборник документов. Т. II (1814—1830), Под ред. Ц. П. Агабяна, Ереван, 1978, док. 367, стр. 601—602.

Վերին Ռաւե

Վուսկումի	7
Ճերայուն	10
Տաթարազ	8
Ալի-ճաղրակ	5
Ալի-բաղրկեն	1
Քանդիրի	1
Դանիշման	2

Խնուս

Քուլի	100
Չաուրմախ	10

Եփրեմ Սեթի մի քանի տասնյակի հասնող նամակներու մեջ մեզ հանդիպեց Ախլցխայից գրված մի նամակ (1830 թվականի 27 օգոստոս ([8 սեպտեմբեր] թվակիր), որը իր բովանդակությամբ հիշեցնում էր Գ. Աղանյանցի վերոհիշյալ աշխատության հիմնական թեզերը։ Աղբյուրագիտական բնութայունը ցույց տվեց, որ Գ. ք. Աղանյանցի ամբողջ աշխատությունը փաստորեն Եփրեմ վարդապետ Սեթյանի նամակի վերարտադրությունն է աշխարհաբար արևելահայերենով և որ Աղանյանցի աշխատանքի հիմքում ընկած է վերոհիշյալ նամակը։

Ինչպես կարող էր Եփրեմ Սեթի կողմից իր աբրահամը ուղարկված նամակը հետագայում ընկնել Աղանյանցի ձեռքը, այնքան էլ պարզ չէ։ Այն շահատերերվեց նաև Հայաստանի արխիվներում, ուր պահվում են Աղանյանցի թղթերը։ Ենթադրելի է, որ Աղանյանցը տեսել է նամակի ոչ թե բնագիրը, որ պահվում է Մխիթարյանների Դիվանում, այլ նրա մի արտադրությունը, որ կարող էր մնացած լինել անձամբ Սեթի մոտ և Ախլցխայում նրա մահից հետո կարող էր մյուս թղթերի հետ տեղափոխվել Քիֆլիս։ Ընդունելի ենք համարում նաև, որ Աղանյանցը կտրող էր շիմանալ գրության հեղինակի ու լինելը, չնայած պարտավոր էր կոհակել՝ քանի որ գրությունը գրում էր հայ կաթոլիկների առաջնորդը և առաջին դեմքով։

Ստորև տպագրում ենք հայր Եփրեմ Սեթի նամակի լրիվ տեքստը.

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Աստուածապատիւ Հոգեւոր Տէր,

27 օգոստոս [8 սեպտեմբեր] 1830 թ. Ախլճխա

Ի կարգ անկեալ բանիւք նամակացս նախադրելոց, ծանուցի համառօտիւ զպատրաստութիւնս զգգիս հայկազնոյ բնակելոյ ի նահանգս Կարնոյ եւ Կարսայ եւ Պայազիտոյ, եւ ի գաւառնս Ախլճխայ նուաճելիս անդրէն ընդ օսմանեան իշխանութեամբ շուել միաբան ուխիւք եւ ընտանեօք իւրեանց ի գաւառս իշխանութեան ռուսաց։

Ի հայկական պատմութեան համարեացի այս գործ արժանի գեղեցիկ վիպասանութեան ընդ եղեգամբ քաջ պատմագրի, որոյ հանգոյն շերեւեցաւ կարծեմ ի դարս առաջինս, զի ամենեքին միակամ եւ միախորհուրդ հայք եւ ուղղափառք⁷ գրեթէ մոռացեալ զընդաբոյս ոխերիմ թշնամութիւնն առ միմեանս⁸, յանդիման նեղչաց իւրեանց պարծ եւ համարձակ ուղույ լինէին ընդ հովանեաւ թեւոց լիամագիւ Արծուոյն Ռուսաց։ Վասն որոյ կամիմ մանրապատում գրել առ յիշատակէ գարուց ապագայից, եւ ի ճաշակ լրասիրութեան օրագրաց Եւրոպայ, ոչ միայն իբրու ականատեսս եղելոցն, այլ եւ յիրս իրս գործաւար եւ եղելոցն առաջնորդ։ Մանաւանդ, զի Պոյաճեան թովմա վարդապետն] խնդրէ ուսանել զորպէսն իրաց ի Սերոբէ վարդապետն] գրով

7 Իմա՝ հայ կաթոլիկներ։

8 Նկատի ունի հայ լուսավորչականների և հայ կաթոլիկների միջև եղած վեճերը։

առ նա, զի յաւելուցու յօրադիրս. ինձ թուի թէ լաւ եւս իցէ ի մէնջ ուսանել Եւրոպայ զիրսդ:

Յետ կանուխ հարցմանց եւ քննութեանց վասն տեղւոյն ուր երթայցէ այս ժողովուրդ գաղթական յօսմանեան սահմանաց ըստ միաբան խնդրոյ գաւառաց իւրաքանչիւր: Արդեւո՞ցոց տուաւ Ախլձխա յարակից գաւառօք որ յօսմանցոյն մնաց ռուսաց. կարսցիք ընկալան զՇօրեկէլ եւ զՓամբակ, այն ինքն է Շիրակ եւ Նիգ գաւառք, եւ պայազիտցիք զկողմանս Գեղարքունւոյ շուրջ զՍեւաւաւ, մինչեւ ի Ղարապաղ: Իսկ յոյնք, որ սփռեալ էին ի գաւառս Հայաստանեայց, ամենեքին իբրեւ վեցհարիւր տունք, ընկալան զՅալզա, մօտ ի Թիֆլիս, ըստ կանուխ ընտրութեան իւրեանց: Ուղղափառք որոց առաւելագոյն սասն ի Կարին է, այլ ի Կարս չկայ եւ ոչ ոք. իսկ որ ի Պայաղիտ մինչ ի Թօփրաք Գալէ եւ յԱլաշկերտ շտամարին ի հարիւր տունք:

Մանու աշխատութեան պէտք եղեն ինձ միաբանել զխորհուրդ ամենեցուն մերոցն ի մի դիտաւորութիւն. դժուարագոյն եւս համոզել զնոսա թէ իսկապէս թողուն ռուսք զնսրաստացիկ գաւառսն. միայն թէ միշտ ի կամս իւրաքանչիւր թողուի զերթն կամ զմնալ, երկուստեք առաջի դնելով նոցա թէ ի մնալն ընդ իշխանութեամբ օսմանցոյն յիշեցէք զոր ընդ այսչափ դարս կրեցիք. եւ ի մեկնելն կանուխ յանձին կալարուք բազմադիմի նեղութիւն զառաջինն, եւ ապա յաւերժ անդորր խաղաղութիւն:

Կարնոյ գաւառ եւ Խնուս եւ Թորթոմ միաբանեցին դիմել յԱխլձխա: Բասեն վերին եւ Ներքին ակն եղ ի Լօռի. միայն թէ ներքինն դրժեաց խոստմանն եւ յետ ընդունելոյ գիր ճանապարհի եւ եւս ի խորս եմուտ քրդանցին, անցեալ յԱլաշկերտ: Իսկ ալաշկերտեայք առ հարցումն իմ նոցա ի կողմանէ պետութեան, թէ զի՞նչ եւ որպիսի՞ խորհիցին, տմարդութեամբ ետուն պատասխանի որպէս ի քրդաց ուսեալ էր նոցա լեռնաւարութիւն, թէ որպէս կամիմք՝ այնպէս առնեմք: Այսպէս ետուն պատասխանի եւ ցարքունի ոստիկանն, որ նստէր անդ յաղագս այնորիկ շմարթացան վճարել ինչ կարգաւորաբար, կէսք դանդաղագոյնս շարժելով կամայ թէ յոչ կամաց մնացին անդէն. եւ կէսք անգլուխ գաղթելով սփռեցան ի զանազան գաւառս:

Ձմերոյ ժողովրդեան ընտրութիւն զԱխլձխա այլեւայլ թղթովք գրեցի առ հատուածն արգոտմցի ուղղափառաց իբրեւ յիսուն տունք եւ այն հարստագոյնք, որոց յանցելում աշնան ի լինել հաշտութեան եւ ի դառնալ Բասքելիչին ի ձմեռոց անցեալ էր ի Լօռի. գրեցի առ նոսա առանձնական եւ միաբանական թուղթս յղեալ արքունի թղթատարաւ. ամենայնն ասացին կորեան եւ չհասին ուր ուղղեալ էին. շունիմ ասել թէ ի նամակաց կայսն կորեան: Նոքա ոչ հաճեցան եւ մեղադիր լինէին մեզ թղթովք, թէ չյազեցա՞յք տակաւին ի շարափառ կողմանէն. եւ զի երկիրն այն նշաւակ է արշաւանաց թշնամեաց, եւ զի աւերակ է, քանզի զառաջինն քայքայեցաւ յառնուլ ռուսաց զքաղաքն հրձիգութեամբ եւ արեան ճապաղօք. երկրորդ յարշաւանս աճարացւոյն, եւ երրորդ ի ճարակել անդ ժանտախտին, յորում հրով գատէր ռուսն զտունս եւ զկարասիս, ուր բունեալ էր ախտն. այսպէս եւ այլովք պատճառօք մեղադիր լինէին մեզ: Յաղագս այսորիկ ելեալ նոքա ի զնին տեղեաց տեղեաց ի Լօռի եւ ի Շիրակ եւ ի Փամպակ ընտրեցին զՂարաքիլիսէ աւան աւերակ, որ ի Փամպակ, զոր եւ կալեալ էր զարասցոց. եւ զնացեալ ի Թիֆլիս չորք ի նոցանէ յանուն ամէն կարնեցի ուղղափառաց խնդրէի ի Ստոէքալօֆ՝ կուսակալէ (զի Բասքելիչ զնացեալ էր ի Բեդոպուրկ) զՂարաքիլիսէ Փամպակաւ: Պատասխանի առնէ նոցա Ստոէքալօֆ՝ թէ կարնեցոց տուան Ախլձխա, իսկ դուք զի վաճառական էք եւ արհեստագէտք, զի՞ խնդրէք յաւերակս Փամբակու: Նոքա իբրեւ ի խնդրոյ իւրեանց չկասեցան, շնորհէր նոցա իշխանն զխնդրելին: Այլ առ նմին տեսեալ նոցա զի շմարթացան արքունի ուժով զկարնեցիս] յիւրեանս կորզել, եւ զի ինքեանք սակաւաւոր մնան ի մէջ բազմա-

Յ Ստրեկալով Ս. Ս.—ռուսական բանակի գնեւերալ-ադյուտանտ, ռուս-թուրքական պատերազմում մասնակցում էր էրզրումի գրավմանը, 1830 թ. Թիֆլիսի ռազմական նահանգապետ:

խուռն կարսեցուց ժանտաբարդոյից, գրեն թուղթ միաբանական առ Արզուման-ցիս եւ առ իս, յորդորելով չգնալ յԱխլձխա, այլ փոխիլ առ նոսա ի Փամպակ: Տուաք միաբանութեամբ պատասխանի՝ թէ անհնարին է փոփոխել իրացն յետ ընտրութեանն եղելոյ բազմապատիկ քննութեամբ, եւ խոստմանն եղելոյ առ պետութիւնն, եւ արձանագրութեանն յարքունի գիւանին: Իբրեւ զյոյս հատին նոքա ի կարնեցուց զալթիյալ որոշեցան դէմ եղեալ գնալ ի Կամպակ տունք յիսուն եւ երկու, որոց զլիաւորքս ջլեցս Կարապետ, Ստեփանեան Յարութիւն, յորս յաւելաւ եւ 'լարա Կսաւորեան Գրիգոր՝ նորոգ դարձ արարեալ ի 'Պօլսոյ ի վերջին աւուրս սեկեւելոյ ռուսաց յԱրզուման, վասնզի խնամութիւն էր նորա ընդ Ստեփանեանին: Սղեն եւ ոսասք, որ ի սոցասէ անցին յԱխլձխա, որոց առաջինն Սայօղլու Գրիգոր:

Յետ այսր ամենայնի կանուխ պատրաստութեանց գհասարակածաւ մայիս ամսեանն սկիզբն եղեւ շուտ ժողովրդեան բազում աշխատութեամբ: Քանզի զայս ամ ըստ ոչ սովորութեան յապագեաց աստիճանն եւ ձիւն, որպէս ի դաշտս չգտանել ճարակ անասնոց, եւ տիղան ի ձեանց եւ յանձրեաց դեռ ունէր զամենայն ճանապարհս: Սակայն նայեցեալ ըսդ բազմութիւն գաղթական ժողովրդեան բազմագոյն սայլից պէտք էիս լաղաղուցանել զնոսա ի դէմ եղեալս, եւ պետութեան չէր իշխելի բուռն առեւ շրջակայ գօլջէից հայոց փութալ յայս աշխատութիւն, զի եւ նոքա ուղիոյ լիսել հանդերձեալ էին, թէպէտեւ յօժարելոցս չկային արգելք, որք եւ օժարակեցին ոչ սակաւ յօգուտ իրեանց: Յաղաքս որոյ ճարտարամտաց Իսահրատիէ'ս կուսակալ Կարսոյ եւ հրամանատար Հայաստանեայց, պատուէր յղեաց ի Կարս զի ի բովանդակ գաւառին որչափ եւ սայլք իցեն հայոց եւ թուրքաց առհասարակ շարժեցին յԱրզուման, որոց ի բեռնակրութիւն սակ արկ Առաջնորդն Կարնոյ Կարապետ վլալորլապետ ռիթսուն ղրուշ ի ղանթար, եւ երեք ոգիք մի ղանթար, թէպէտեւ յետոյ նուազեաց գինն: Եւ յարքունուստ ողորմութիւն աղքատաց քսան եւ հինգ մանէթ առ մէն մի տուն քաղաքացեաց եւ գեղջէից բաշխեալ յիմ ձեռն, զերրորդ մասն տալով յսկիզբն ճանապարհին եւ զսնացեալն ի կատարածին (երեք մանէթ մի պաճալի ռսկի է): Այսպէս եւ ալիւր ըստ պիտոյից ճանապարհին: Սակայն եւ ի ժողովրդեան մերմէ հանգստակեցաք, որոց արտաքոյ մնային ցուցակին տուելոյ յարքունիս:

Յանգէսս իմն մեծապէս վրիպեաց Առաջնորդս, զի համարելով թէ սայլքըն պատրաստեալք ոչ բաւեն տանել զժողովուրդն՝ համայնգամայս ետ հրաման հանել զի սայլորդքն վարձուորք տարեալ ի Կարս թողցեն զժողովուրդն եւ դարձցին ի բառեալ զմնացեալսն: Հասանեն սայլք ի Կարս, եւ զի յետուստ ոչ մնայր ժողովուրդ առ ի գալ, ցրուին սայլքն յիւրաքանչիւր տեղիս եւ ժողովուրդն մնայր ի գետին. որով ընդ ամիսս յերկարեաց այս ճանապարհորդութիւն, եւ ի ծանր աղքատութիւն անկաւ ժողովուրդն: Այլ վասն այս ամենայն պատրաստութեանց մինչ կատարումն ելանելոյ ժողովրդեան, եւ ցվերջին օրն դատարկելոյ քաղաքին պար[տք] ի վերայ ինձ աւուր ընթանալ ի դուռն Բանգրադիէին, որ եւ միշտ քաղցրութեամբ ընդունէր զխնդրուածս իմ, եւ զկարեւորսն ուսուցանէր եւ պատուիրէր մեզ: Այսպէս էր ինձ միշտ աշխատ առնել եւ զերկու ի զլիաւոր գործավարաց նորա. մին էր խաչատուր պէկ Շահնազարեան՝ նախկին թարգմանն, եւ միւսն եւս Պէճան Կոնկանով երիտասարդ հայկազուն թիֆլիզցի:

Յայս ամենայն նախաշաւիղ արարս դիպողագոյն դատեալ եղեւ համաձայնութեամբ ուղղափառաց եւ ալլափառաց յղել յԱխլձխա գործակալս ոմանս ի դիմաց ժողովրդեան պատրաստել զնացողացն տեղի բնակութեան: Եւ առաքեցան երկու ի հայոց եւ երկու ի մէնջ, մին յատուկ Ախլձխացի Յո-

10 Պանկրատե Նիկիտա Պետրովիչ (1788—1836)—ռուսական բանակի գնհերալ-ադյունտանտ, ապա գնհերալ-լեյտենանտ, 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմում հատուկ շոկատով գրավեց Բայազետի փաշայութիւնը: 1830 թ.—Առանձին Կովկասյան կորպուսի շտաբի պետն էր, իսկ 1831 թ. Անդրկովկասում ռուսական զորքերի հրամանատարը:

հանճան անուն, որ ի բազմաց հետե վաճառական էր եւ բնակէր յԱրզում, եւ երկրորդն քեռորդի նորա Գրիգոր էփրիկեան վաւերական թղթովք զօրավարին մերոյ առ հրամանատար տեղւոյն եւ ընծայական թղթովք ի մէնջ առ ժողովուրդ քաղաքին: Ուղւոյ եղեալ զնոսա բուն հարաք ուղւոյ գնել եւ զժողովուրդն:

Կարգաւորագոյն քան զմերն էր պատրաստութիւն յունաց, զի գաղթական կիւմիշխանացի եօթանասուն տուն եկեալ յԱրզում յարշաւանս Բասքելիշի անդ ի նմին աւուրս անցին և Վրաստան, եւ զխաւորի նոցա Թօտօրի անուն յանձն եղեւ պատրաստել տեղի բնակութեան ողջոյն յոյն գաղթականին: Նա ի Վրաստանէ եւ յԱրզում վաճառական ոմն այր զզօն անուն Սանի, եւ ընդ նմին աւագ քահանայ նոցա, երկոքին եւս մտերիմ ծանօթք ինձ կալան զգործ զխաւորութեանն, եւ համօրէն ժողովուրդ նոցա սրտի մտօք ունկնդիր լինէին որ զինչ միանգամ ընտրէին եւ հրամայէին նոքա:

Յետ այսր ամենայնի ի հասարակածէ ամսեան մայիսի սկիզբն արարեալ ժողովրդեան քակտիլ ի կայից իւրեանց մինչեւ զհինգ յունիսի դատարկեցաւ ողջ Արզում քաղաք եւ շրջակայ դաշտն Կարնոյ եւ Դերջան եւ Թորդում, որք կանուխ յանձնեալ էին Օսմանցոյն: Բասեն, ինուս, Դէքման, գունդ կազմեալ ազատադէմ եւ համարձակ գնային զճանապարհ իւրեանց: Սւ ըստ աւուր աւուր ի ճանապարհ ելանելոյ ամբոխին հրամայէր վասն նոցա Բանդրատիէն օֆֆիշեալ զոմն հանդերձ ընդ իւր զինուորօք, զի խաղաղ եւ աներկիւղ հասուցեն զաւուրն շու ի կետադրեալն: Վասն այնորիկ հարկ լինէր յապաղել իրացն, զի պարտք էին հաւաքել զգաղթեալսն յալլ եւ յալլ տեղեաց, եւ համար առնել տանցն ի ճանապարհ անկելոց, եւ զցուցակն հասուցանել առ զօրավարն, զի օրինաւոր գիր հրամանի արասցէ վասն ամենեցուն նոցա միանգամայն: Նաեւ ինքն իսկ Բանդրադիէն ոչ զանց առնէր անձամբ ելանել երբեմն տեսանել արտաքոյ քաղաքին զաւուր զուեալսն, սրտապնդէր զնոսա արիանալ խուն մի նեղութեան ճանապարհին յուսով ապագայ հանգրստեան:

Յառաջին աւուրսն ի ճանապարհ անկանելոյ ամբոխին զօրավարն ստիպեաց զԱռաջնորդն, զի մեկնեացի փութով ի քաղաքէն, որպէսզի մի դանդաղեացի ժողովուրդն. եւ նա ըստ հրամանին աւուրս սակաւ դազարեալ ի վանսրն Հասանղալայի, ի 3 յունիսի ել անտի գնալ ի Կարս. եւ ի հաւաքել ժողովրդեան անդր ել եւ անտի դիմել յԱխլձիս: Իսկ մերակողմանց փոխանորդ մեծաւորն հ[այր] Նիկողայոս¹¹ մնաց մինչեւ ցօրն յետին ելանել ընդ տանուտեառն առ որում բնակէր. եւ ինձ հարկ է վերայ կայր դեգերել անդէն վասն գործոյ ժողովրդեան, զի այն աւուրք ոչ եւս հանգստեան եւ նստելոյ աւուրք էին, այլ պարտ էր յածել անդադար առ ամենեւին, զհողեւոր պէտսն հոգալ, եւ զծանրաշարժսն փութացուցանել, զի մի օր ի յօր դանդաղեացին. ոմանց փասափօռք խնդրել, կիսոց զպարտս եւ զպահանջս դիւրել ի հատուցումն, եւ որ այլ եւս անբաւ գործ վասն գեղջէից եւ քաղաքացւոց. ուրեք եւ վասն այլափառաց բարեկամաց. եւ այն զի ամենայն քահանայք մեր որ ի քաղաքին էին, ի նստրոյն էին, թողին նոքա եւ մեկնեցան ի գաւառ իւրեանց: Ի հոգեւորս միայն հ[այր] Նիկողայոսի օժանդակութիւն կայր ինձ մօտ, այլն ամենայն յիմ թիկունս ծանրաբեռնեալ էր, մինչեւ զգիշերս ողջ ի գլուխ հանել գրելով համարս եւ ցուցակս ժողովրդեան ըստ ամենայն հարցմանց եւ հրամանաց եղելոց մերթ ի Բանդրադիէն եւ մերթ յատենէն Թիֆլիզու Գոհութիւն աստուծոյ, զի վարժութիւն մեր առ եւրոպական հրահանգս եւ կարգաւորութիւնս դիւրացուցանէր փութանակի կատարել զհրամանս ըստ նոցայն ախորժակաց, առ ծանրաշարժութեամբ հայոց, որք շէին ընտել յայսպիսեաց, եւ զգովութիւնս ի գլուխ տանէաք, մինչեւ յաւուր միում յատենի

¹¹ Հայր Նիկողոս Մովսիսյան—Մխիթարյան Միաբանության անդամ, Կարմիրքցի, վախճանվել է 1839 թ. սեպտեմբերի 29-ին Ախլցխայում:

ասել ընդ իս Բանգրատիէւի թէ զոհ եմ զժողովրդէն ուղղափառաց զի բարի օրինակ ետուն ամենեցուն:

Ի քաղաքին Արզում մնացին ի մերոց շորս եւեթ տունք, որք ոչ յօժարեցան կլանել անտի, եւ ճնտոյ Յակոբ բաղիշեցի անց ի Մուշ, զի սեղանաւոր էր էմին փաշայի որ անդ. եւ այլ եօթն տունք ուղղեցան ի Տրապիզոն, ի Խրիմ ակն հղեալք: Ի Հայոց մնացին իբրեւ հարիւր տունք. պարագլուխ նոցա Քէօսէօղլու Համբարձում արապկերցի, այր գործօն եւ ճոխ, որոց ի վերջնումն աւուր հհաս եւ նոր Առաջնորդ ի Պօլսոյ, որ երբեմն վէքիւն էր Պատրիարքին Բարթողիմէոս վլայրգլապետին, գործով որպէս թէ յետս նահանջել զժողովուրդն. այլ օգտեցաւ եւ ոչինչ, զի ըստ նորուն իսկ խոստովանութեան առ ոմն ի բարեկամաց անմարթ էր հետեւ հնարս առնել իրացն:

Ի շրջակայ գիւղօրէս ի Հինձք գիւղ երկու եւեթ տունք մնացին ի մերոց հարստագոյնք, եւ միւս եւս ի Խոռանձ: Ի Հայոց գրեթէ կիսով չափ մեկնեցան, եւ այլքն ըստրեցին մնալ ի կայի իւրեանց: Ի գիւղն Ճինիս, ուր էին իբր հարիւր տունք երէց տեղւոյն բարձեալ զամենեւին ի ձիւս եւ ի սալլս, հուր հարկանէ եւ զկեղեցւոյն, զի մի եւս յուսացեն դառնալ յետս. տեսանէի զնա յուզեղ վարեալ զինու զարդու որպէս քաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ:

Այլ զգունդագունդ խռնել ժողովրդեան ի գիւղօրէից եւ յԱրզումայ ի վերջնումն աւուր էր տեսանել ի 5 յունիսի, յորում զինուորական հանդիսիւ յանձնեալ զքաղաքն ի ձեռս Փահլիւ փաշայի, որ ի դիմաց սպարապետին Հաճի Հասան փաշայի գայր տիրել քաղաքին: Անցանէր ի Հասանգալէ միջոց ճանապարհի ասել, թէ ի զրանց Արզումայ մինչեւ ի Հասանգալէ միջոց ճանապարհի ձիւաւորի վեցից ժամուց, էր տեսանել միագօտի բազմութիւն զօրականին եւ գաղթականին եւ կարասույ եւ անասնոց նոցա:

Այլ զի տակաւին մնային ի գիւղօրէս բազումք յօժարեալք ի ճանապարհ, թողոր Բանգրատիէւ ի քաղաքին զՔրիստօֆօսս Վօյինկով¹², յոյն ազգաւ, գիտակ տաճիկ բարբառոյ հանգերձ հեծելովք, որպէս թէ մնալ մինչ ի գալուստ սպարապետին, եւ ողջունել զնա յանուն իւր. եւ գործակից հրամայէր նմա զպատուեալն հազարապետութեան անուամբ Մկրտիչ Խօջօնեց, զայր քաջ եւ ճարտար: Ի վերին երեսս այսու պատճառաւ մնային նոքա, այլ գործնոցա էր հաւաքել զկաց մնաց ժողովրդեան ելելոց, եւ հասուցանէր զկնի իւր:

Չայսու ժամանակաւ մինչ մեք շուէաք յԱրզումայ, Ռէնթ¹³ զօրավար Պայազիտու, կրօնիւն ուղղափառ, դատարկէ զի ձեռին իւրում եղեալ գաւառն եւ յանձնէ Օսմանցոյն: Բսկ որ անդր Հայք կանխագոյն շարժին քան զկարեացիս, քանզի զինու մաքառեալ էր նոցա ընդ քուրդս եւ ընդ թուրքս, եւ զբազում ի նոցանէ սրոյ տուեալ ճարակ, վասն որոյ ոչ եւս հնար էր մնալ նոցա անդր: Խնդրեն առնուն զԴեղարքունիս հանգերձ շրջաբնակութեամբն որչափ բաւեցէ ի դադար իւրեանց եւ խաշանցն. եւ որպէս ասացաւ քսան հազար ոսկի (պաճախի) առնուն փոխ յարքունուստ, ժամագրութեամբ հնգից ամաց հատուցանել անտոկոսի: Եւ զի սահման նոցա մօտաւոր էր, փութանակի փոխին անդր դիւրաւ եւ անաշխատ, զի համօրէն դժուարութիւնն մնաց կարնեցւոց ըստ վերոգրելոցս:

Խաղաղացոցին զժողովուրդն ի բաշտն Վանանգայ յանդիման Կարս քաղաքի, շու մեծ եւ ահագին, ուր ոչ պակասէին խնամք յարքունուստ, ալիւր տալ կարօտելոցն. սահմանեալ չափն էր մի փութ, որ է իբր երկուտասան

12 Քրիստօֆօսս Վօյինկով—ռուսական բանակի շտաբ-կապիտան, ակտիվ մասնակցութիւն է ունեցել 1826—1828 թթ. ռուս-պարսկական և 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներին. անմիջականորեն առնչվել է պարսկահայոց և արևմտահայերի գաղթի խնդիրներին:

13 Ռենտ Իոսիֆ Անտոնովիչ—ռուսական բանակի գնդապետ: 1826 թ. Արաս-Միդլայի կողմից պաշարվել էր Շուշու բերդում: 1829 թ. կառավարում էր ռուսական զորքերի կողմից գրավված Կարսի փաշայութիւնը:

• քթա եւ կէս ըստ մարդաթուի, զաւուրս հնգետասան, որ է հրամայեալ շափն զօրականին. սակայն էր որոց յիշատակեալ շափոդ ողջ հասանէր, եւ էր որոց նիազ: Զշինականսն փութով վարեցին ի կետադրեալն, զի էին նոցա սայլք եւ գրաստք, որք բացի հացէ այլով իւրք ոչ ծանրանալին պետութեան. իսկ քաղաքացեաց հարկ եղեւ անագանել անդէն շատ կամ սակաւ, մինչեւ զտանել սայլս եւ շարժել զբանական զայն. քանզի բազմութեան սայլից պէտք էին ոչ վասն ամբոխին եւեթ, այլ եւ վասն ախից զօրականին եւ անօթոց պատերազմի, եւ բազմամթեր աւարացն, որ յանկած է պատերազմաց:

Հարկ ի վերայ հասեալ էր եւ ինձ աւուր աւուր ելանել շրջել զժողովրդրդեամբն, եւ մերթ գիշերել ընդ նոսա ըստ ազգի ազգի պիտոյից հիւանդաց կամ վշտացելոց, զի յայնչափ բազմութեան իբրեւ երեքհարիւր տանց բաշխելոց ի բազում գունդս խառնեալս ընդ հայոց յայտ ուրեմն է թէ ոչ պակասէին բազմադիմի արարք կթուցիչք ոգւոց: Թող եւ զբազմակոչ աղաղակ աղբատաց հայոց, որք նեղեալ ի ծանր կարօտութենէ խմբովին պատէին զերիվարաւ եւ անիծակուռ լինէին Առաջնորդի իւրեանց. զորս միխթարական բանիւք պարտ էր սփոփել եւ քաջալերել: Ի կարգի բանիս յաճախութիւն առաջնոյ դիմի մի ի սնապարծութիւն ինչ գերեսցի, զի կարգ պատմութեանս այսպէս բերէ, ստոյգ ածել զթել խօսիցս:

Ոյք ձեռնհաս էին՝ վարձեցին սայլս եւ ուղղեցան յԱխլձխա, յայսպէս եւ կարսեցիք ի նմին ժամանակի դատարկեցին զքաղաք եւ զգիւղօրէս իւրեանց եւ անցին ի Շիրակ գաւառ եւ ի Փամպակ. եւ զկարսեցիս առ սակաւ սակաւ արքունի ծախք ամբարձեալ ի սայլս անցոյց ի Կիւմրի աւան: Քանզի առ անագանել գործոյ շուտն եւ ի հասանել ժամանակեալ պահուն յանձն առել օսմանցոյն զկարս, ոչ եւս մարթ էր ընդ Արտահան եւ ընդ Զրլաբը յուղարկել զժողովուրդն, զի եւ Արտահան մասն է Օսմանցոյն: Պատուէր ետ Բանգրա-տիէ փոխել նոցա ի Կիւմրի ի սահման ոռւսաց հեծելոյ միօրեայ ճանապարհ ի Կարսայ. ուստի տակաւ թէպէտ ընդ երկայն ճանապարհ գնացեն ի տեղի իւրեանց. եւ ի հինգ յուլիսի աւանդեցին օսմանցոյն եւ զկարս, թողեալ անդր զվերոյիշեալ Վօյնիկով մինչեւ ի հունձս ցորենոյ կարսեցւոյ, ըստ պայմանի եղելոյ:

Կիւմրի աւան յարեւմտեան ծայրի կայ Շիրակայ, առ ափամբք Ախուրեան գետոյ, այն է Արփա շայ, իբրու կէս ժամաւ հեռի ի ջրոյն ի բարձու տեղի, եւ առաջի տեղի պահպանութեան ոռւսաց: Զգետովն բանակեցաւ ժողովուրդն. եւ մինչդեռ անդ էր Բանգրատիէ հրաման ընկալեալ ի նմանէ, մեկնեցի զուղղափառ ժողովուրդ մեր յայլ ամենայն խմբից, որոյն ուֆֆիչեալ սահմանեալ նոցա, եւ զբանակտեղն զատուցեալ, որպէսզի դիրազոյն յաջողեսցի միախումբ յղել զնոսա զճանապարհ իւրեանց:

Կարսայ բնակիչք տունք իբր վեցհարիւր, թող զշինականս, ոչ միահամուռ ի մի տեղի փոխեցան, այլ յերիս անջատան, զի մղտեսի Ակօ անուանեալքն, երկու եղբորորդիք մաքսապետք Կարսայ եւ յոյժ ընչեղք յիւրեանս արկին զմասն մի տանել բնակեցուցանել ի Ղարաքիլիսէ աւան Փամբակու. կանցի Մարտիրոս, որ ի գործ զինուորութեան ստացաւ հարստու հարստութիւն բազում ճգնի քաղաքացուցանել զԿիւմրի, եւ առ ի նոյն սակս որսացաւ զորս կարաց եւ յԱրզումայ. երրորդ պառակտողն էր Զախալօղլու Ստեփան արքեպիսկոպոս քաղաքին, որ զիւրեան համախոհսն տարաւ բնակեցուցանել զկողիւք Արագածու յանրակ գիւղն Յառիճայ, ուր հոյակապ եկեղեցին է կանգնեալ ի Զաքարիայ սպասաւարէ, եւ սակաւ վնասեալ կանգուն կայ ցայսօր. պնդելով թէ եւ համօրէն Շիրակ գաւառ եւ Փամպակ յիւր վիճակ հասանիցէ:

Իսկ որ ի Կիւմրի նստի Առաջնորդ Շիրակայ Մկրտիչ լոկ վարդապետ, ձեւանայ ասել, թէ նա նոր ժողովրդեան խնամ տարցէ եւ ինքն հնոյն. այլ որպէս թուի հնարի խարդաւանել զնա եւ յինքն կորզել զանչափ ժողովուրդ: Ըստ դմին օրինակի շինականք, որ ի բզեշխութենէ Կարսայ անցին այսր սփռեցան կէսք խմբովին եւ կէսք ցիրուցան ի մօտակայ գիւղօրէս մինչեւ

Ապարան: Այսպէս եւ ոմանք ի գիւղից Կարնոյ, գի ալլքն զետեղեցան շուրջ Ախլախ քաղաքաւ, եւ յԱղղոր եւ ի Խըրդզ եւ յԱխալքէլէք, եւ որ ալլ եւս: Եղեն եւ ոմանք եւ լինիցին, որ նեղեալ յառժամանակեայ կարօտութենէ հացի յետս անգրէն դարձան յերկիր իւրեանց յառաջին, ընդունելութիւն մեծ գտեալ յօսմանցոյն: Սակայն ընդհանուր տեսեալ Կարս ոչ այնչափ հաւատարիմ գտաւ ի խոստմանն որչափ Կարին եւ Պայազիտ:

Դառնամ այժմ յափունս Ախուրենայ ի բանակտեց կարնեցոց, որք յամեցին մնացին անդր իբրեւ ամիսս երկու, զի ոչ գտանէին սալլք յուղարկել զնոսա վասն վերահաս արդիւնաբեր աւուրցն մշակաց, որք ի քակտել եւ ի հերկել կային զանդաստանս իւրեանց, եւ ոչ էր իշխան պետութիւնն բուռն առնել հաւաքել զսալլս նոցա. զի առ փոքր վնասու ժողովրդեան եկելոյ, մեծագոյն վնաս ի վերայ հասանէր եթէ պահակ ունեւորվ զսալլսն ոտնահար լինէին հնձոց ուստի զեան էր համօրէն գաւառացն: Վասն որոյ միխթարական բանիւք արգահատէին ոստիկանքն եւ իշխանք, ժոյժ ունեւորվ վայր մի մինչեւ հասցեն սալլք ի Վրաստանէ, ուր կանուխ վճարին հունձք, թէպէտ եւ նոցանէ շնչել ինչ շահ, զի յետ հնձոցն խմբովին իջանէին ի Կողբ յաղահաստս: Վասն որոյ որք կարողք էին զտին եւ վարձեցին սալլս եւ գնացին. անկարողքն մնացին. ի մերոց հարիւր յիսուն տունք, եւ յայլափառաց տասնապատիկ քան զմերն, միահամուռ իբրեւ հազար ութհարիւր տունք, տարածեալ ընդ բազմափեղկ կարկատուն վրանօք առ հոսանօք ջրոյն, արեւակէզ ի սօթի եւ ջրողող յանձերան:

Թէպէտ եւ չպակասէր հասոյթ հացի յարքունուստ, առ նմին դիրազին էին եւ ուտելիք, սակայն ծառացաւ բարձրացաւ գանգատն եւ բողոք, նորոգեցաւ յիշատակ սոխոյն եւ խստորոյն եւ պուտկացն Եփապտոսի, մինչեւ յառակս առնուլ ուրումն թէ դրած սեղան թողինք, փակած դուռ գտանք: Անէժք եւ գոչինք պառաւանց ի վերայ որոց պատճառ եղեն այսմ ամենայնի, ոչ պակասեցին եւ ծանր լուտանք վազեալ զինեւ: Մովսէսեան երկայնամտութեան պէտք էին անխռով տանել մարդկեղէն անժուժութեան միխթարել սփոփել զնոսա, եւ առ նմին աղաչել զերեսս իշխանաց նստելոց ի Կիւմրի ջանալ յօղնութիւն տառապելոյ ժողովրդեան: Ի վհատութեան սրտիս այս ինչ զօրավիգն էր, գի գոծնքն եւ ազնուաբարոյք խրախոյս տալին ինձ մի լքանիլ, ալլ արիանալ մինչեւ ի կատարած:

Յայսմ ժամանակի գրէ ինձ հ[այր] Նիկողայոս յԱխլախայէ ի դիմաց բնիկ եւ նորահաւաք ժողովրդեան քաղաքին, զի ի կարգի եղեալ գգործ զուոյն անյապաղ փութացայց հասանել առ նոսա վասն լաւ եւս խորհել եղեալ զգործ հասարակաց: Քանզի որովհետեւ առաջին խորհուրդ իմ էր անցանել ի Շիրակայ Լոռի եւ ի Փամբակ, տեսանել զմերսն, եւ խորհել վասն որոց բուռն հարին, ուր չկտրէի գնալ վասն միջանկեալ քառանդինին զաւուրս շորեքտասան մինչեւ գլխաւորեալ զիրս ժողովրդեան. եւ զի անտի խնդրէի անցանել ի Թիֆլիս եւ հանդիպել կուսակալին, եւ ապա գնալ յԱխլախա: Այժմ ստիպաւ կոչեն զիս անդր, յառաջ քան զամենայն տեղիս:

Յաւուրս յայսոսիկ յօգոստոսի 2 եհաս նոր վերակացու գաղթական ժողովրդեան Մայոռ Անօսով, ում յանձն էր խնամ ունել եկաց յամենայն սահմանաց Օսմանեանց մինչեւ հասցեն ուր երթալոցն: Որոյ յայց ելեալ ի բանակն պատուէր ետ ամենեցուն ընտրել ազատօրէն այր իւրաքանչիւր ուր եւ յօժարեցին գնալ ի Ռուսաց իշխանութեան: Ի հայոց իբրեւ երկերիւր տուն դրեղան ի համար Փամբակու. սակայն ոմանք եւ ի մերոց, եւ առ սակաւ սակաւ զորս սալլիւք եւ գողս եղամբք եւ գրաստութք եղեւ հասուցանել ի տեղի իւրեանց, եւ գլխովս դրուել ի մօտակայ գիւղօրէս մինչեւ խուն մի նորոգեսդի Ախլախա: Եւ գի ի մօտել աւուրց ցրտութեան մի մնասցեն բացօթեալ: Եւ իմ կատարեալ ի Շիրակ զտօն Իսկուհույն անցի փութապէս յԱխլախա, զորոյ զհանգամանսն լիադոյնս գրեցից ի դէպ ժամու:

Չուղաւոր համաբիմ դրելոցս յիշեցուցանել եւ վասն Սերոբէի վ[ա]րդ[ապետի], որ երբեմն դպրոցական էր եւ այժմ վարդապետ Հայոց եւ ար-

քունի խորհրդական ի դրան Բասքեւիլին. ժանօթ անգղիացի եւ գաղիացի եւ ռուս բարբառոյ, թող եւ գիտալերէն եւ զայլս: Եւ ի տեղափոխել ժողովրդեանս մին էր ի շորից խորհրդականաց հրամայելոց ի Կոաֆէն վասն այսր: Շնորհէ սմա Բասքեւիլ պատիւ եպիսկոպոսութեան, որոյ յամսեանն մայիսի գնացեալ լէջմիածին ձեռնադրի եպիսկոպոս, եւ դառնայ ըստ հրամանին ընդունելոյ ելանել յայց եւ ի քննութիւն վիճակի նորեկ ժողովրդոց: Նրջեալ կարգաւ եհաս այժմ ի քաղաքս: Յետ ի գլուխ հանելոյ զգործն կարծեմ ակն ունի հասանել զատարկ Աթոռոյ Թիֆլիզոս:

Միւս եւս կարեւորի ի գիտել, թէպէտեւ ցաւայի, է դժնդակ ախտն խան- ձեալ ի Թիֆլիս եւ անտի տարածեալ յաշխարհն Վրաց, կոչեցեալ Եանր Գա- րա կամ... [մեկ բառ անընթեանելի] պատճառել յօգոյն ապականութենէ, կամ ի տապոյ խորշակէ, որ ընդ հարկանելն եւ զպանանէ զմարդ, վարա- կեալ հրով ջերմութեամբ եւ թուրութեամբ, եւ զմարմինն սեաւ ներկէ. միայն գի չէ փոխադրական: Հազարք մեռան ի Թիֆլիս, եւ այլքն առհասարակ փա- խեան ի գիւղօրէս, դատարկ լքեալ զքաղաքն, մինչեւ փոփոխեսցի օդ եւ շունչ տեղոյն:

Շատ իսկ ձանձրացուցի զերկայնամտութիւնդ երկարաբանութեամբս. վասն որոյ դադար տուեալ եւ պատուով ողջունեալ ղյարդոյ վերապատուեալ վարդապետս մեր, խոնարհ համբուրիւ շնորհաբաշխ աջոյդ, մնամ

Ակնաբկութեան սրբութեանդ
խոնարհ ծառայ եւ որդի
Հ[այր] ԵՓՐԵՄ ՄԷԹ:

Հ. Գ. Խոնարհ աղաչանօք ծանուցանեմ սրբութեանդ, գի յետ առաջնոր- ղելոյ իմոյ ժողովրդեան ցայս վայր եւ հասանելոյ իմ ի քաղաքս, հին եւ նոր ժողովուրդն եւ քահանայք միաբերան պնդեն ինձ չեւանել ինձ աստի, եւ խոր- հին զգործ մեծաւորութեան ի գլուխ իմ հանել, եւ արքունի ուժով արգելոյ զել իմ ի քաղաքէս: Եւ առ ժամս պատ ի պատ բանիւս գնամ ընդ նոսա զի մի խոստացուցից զպնդութիւն կամաց սոցա, եւ մնամ մինչեւ հասցեն ինձ օգնականք, որպէսզի առանց դժուարութեան յաջողեսցի ինձ հնախնդիր ճա- նապարհորդութիւնս: Վասն որոյ գրեցի առ Հ[յ]ր Եսայի¹⁴ փութալ հասանել առ իս, եւ դարձեալ սպասեմ անձկանօք օժանդակս մեղ տեսանել յղեալս է Վեհէդ: Միանգամայն շնորհս առնէք գրել ինձ թուղթ խստադոյն բանիւ որ- պէս թէ տարապարտ դեգերիցիմ ի գործս քաղաքականս արտաքոյ հրամա- յեալ հնազանդութեանս եւ գործոյ յանձնելոյ ինձ: Որպէսզի յայտնի ցուցեալ նոցա զայդ գիր թափեցիզ զանձն իմ ի բռնադատութենէ նոցա: Իսկ ի հա- սանել օգնականաց մարթասցուք հիմնել դպրոց օրինաւոր, եւ առանց բանի մեծաւորութեան կրթել զսիրտս նոցա: Առ ժամս այսչափ, յանձնելով զբո- վանդակն ի մատակարարութիւնդ Հոգեւոր Տեառնդ:

Ծառայ եւ որդի
Հ[այ]ր ԵՓՐԵՄ ՄԷԹ:

¹⁴ Եսայի վարդապետ Մղրաբլան.—Միւրթարյան Միաբանութիւն վարդապետներից, ծըն- վել է Կ. Պոլսում 1801 թ. հունվարի 8-ին, քահանայական ձեռնադրութիւնը ստացել էր 1823 թ. նոյեմբերի 9-ին, վախճանվել է 1859 թ. հուլիսի 9-ին Բոմբեյում: